

Պատկերացրե՛ք համարստա Չար-
դեհայի վե ճումսա իրքեսի կիւն-
իւրի բապ օրանուր Գրչ.
Սեփեկի պուրա իջին բեշին 60
Այլ ալլըդը 35
Սեփեկի բեշին բաշրա իջին 85
Այլ ալլըդը 45
Բարա խճրեթի պիգե ալիտ տիր.
90 դրուշուգ բարա բուրա 80
դրուշա գալուղ օրանուր.
15 կիւնիւք ճիւսիս 60 բր. տըր.

ՄԵԶՄԱՌԷԱԻ

50 րարս

ԱԵՊԱՐ

50 րարս

مجموعة اخبار
بك اوغلى تقسيم جاده سی و نمره ٦٥

DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHIBAR
Grand'Rue de Péra 65

Ղաղէթանա միւթէլլիգ խոտուաթ իշին ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՕՂԱՅԵԱՆ միւրաճապ օրանուր — Խոտրէլլանի Պէրիստոնեայ ծառակի քէպիլուէ Ն. 65

ԱՍԻԹԱՆԷ 12 ԱՊՐԻԼ

ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹ

(Շարունակութիւն)

Խղճմտանքը՝ ըստ Ա. Թովմաս Աղ-
լինացւոյն՝ է այն գործողութիւնն
հոգւոյն, որով մեր գործող կը մեր-
ձեցունենմը օրինաց ու սկզբանց գի-
տութիւննիս: Գործ մը պիտի ընենք,
մեր միտքը, բարոյական սկզբանց
ծանօթութեանը մերձեցունելով, այդ
կատարուելիք գործոյն վճիռ կար-
ձակէ ու կըսէ, այդ գործը յոռի է
կամ բարի: Կը ցուցնէ, կը յայտա-
բարէ թէ պէտք է ընել զայն կամ
անկէ խորշիւ: Եթէ այդ ներքին գոր-
ծողութիւնը ըլլայ գործող մը կատար-
ուելէն վերջ, այն ատեն խղճմտան-
քն է մտաց այս գործողութիւնը ու-
րով կատարուած գործը կը պիտա-
րակէ կամ կը գովէ: Ուրեմն խիղճը
կարէ սահմանուիլ սապէս. «Այնքան
խաւառուեալ մտաց որով մեր գործող
բարոյական արժեքի կ'որոշուի»:

Ասկէ կը հետեւի որ խղճմտա-
նաց վճիռներն կը կազմուին բարոյա-
կան օրինաց սկզբանց ծանօթութեանն
համաձայն:

Արդ եթէ խղճմտանքն է մեր-
ձեցունի բարոյական սկզբանց առ-
ղանազան գործի մարդկային կենաց,
ուրեմն հարկաւոր է որ մարդկային
միտքը ճանչնայ ու գիտնայ ինչպէս
որ պէտք է այս սկզբունքներն, որք
են հիմն դաստիարակութեան ամեն
անհատից և ժողովրդոց, պէտք է
ճանչնայ կըսեմ այն սկզբունքները,
որոց վրայ հիմնաւ են ամենայն
քրիստոնէական պարտք և իրաւունք:

Ուրեմն հարկաւոր է գպրոց մը
մատչելի ամենեցուն, ուր մարդիկ
կարենան ուսանիլ բարոյական կենաց
մեծ սկզբունքներն, ուր բացատրուին,
յայտարարուին բարուց և ընթացից
կանոնք անժխտելի հեղինակութեան
մը կողմանէ:

Արդ ո՞վ կարէ ժխտել այդ դաս-
տիարակութեան նկատմամբ Գրիս-
տոնէութեան բարձր հեղինակութիւ-
նը, որնոր Աստուածային իշխանու-
թեան վրայ կրթնելով կը յայտարա-
րէ մեր այդ իրաւունքները ու պար-
տականութիւնները Աստուծոյ կող-
մանէ և յանուն Աստուծոյ, որ է յա-
ւիտենական արդարութիւն, ճշմար-
տութիւն և հեղինակութիւն:

Անշուշտ, Գրիստոնեայք, ամենուն
բարին խորը գրուած կայ բարոյա-
կայն օրէնքը, որնոր ամենուն համար
գրուած կանոն մ'է, որուն պէտք է

ամեն ոք հետեւիլ, ոչ ոք կարէ զայն
մերժել ու ժխտել:

Բայց անկա ընդհանուր ըլլալով,
այն պատճառաւ ամեն մանրամասն
պարագայից չի մերձենալ: Մինչ խղճ-
մտանքը կենաց ամեն գործոց վը-
րայ վճիռ արձակելու կոչումն ունե-
նալով, անկէ կը հետեւի որ բնական
օրէնքը ինքրին չի բաւեր միշտ,
մեկնութեանց պէտք ունի, պէտք է
որ նա բացատրուի, տարածուի, մեր-
ձեցուի մարդկային կենաց ամեն մաս-
նաւոր գործողութեանց, վասն որոյ
հարկ է բարոյականի դպրոց մը որ
կազմէ, ուղղէ և առաջնորդէ տղայոց,
երիտասարդաց և չափահասից խղ-
ճմտանքը:

Եթէ խօսքս ընդ միջնով ձեզ հար-
ցնեմ, Սիրելի Գրիստոնեայք, թէ կա՞յ
բարոյականի դպրոց մը ուր բնական
օրէնքը բացատրուի, մեկնուի և կե-
նաց ամեն պարագայից ու գործոց
մերձեցուի. դուք ամենքդ պիտի
պատասխանէք, այդ դպրոցը մեք
ունիմք, անկալ է Գրիստոնէական
վարդապետութիւնը տղայոց, պատա-
նեկաց համար, որնոր իւր վսեմ
բարձրութեամբ սրտերու մէջ կը գե-
տեղէ բարոյականի նախնական գա-
ղափարները, անկալ է Գրիստոնէա-
կան քարոզութեան բեմը, ուր կը
մեկնուի Աւետարանը, ուր յանուն
Յիսուսի Գրիստոնի կը սորվեցունին այն
ամեն սկզբունքները և դասերը, որք
հարկաւոր են առաքելութիւնը ճանչ-
նալու և անոր հետեւելու համար, և
ախտը, չարիքը որոշելու և անկէ
խորշելու համար, ի բարիս հաստատ-
ուելու և չարէն զգուշանալու համար:
Գրիստոնէութեան մէջ Ս. Եկեղեցիէն
դուրս ո՞ր կարէ գտնուիլ պատշաճ
կերպով կազմակերպուած բարոյականի
դպրոց մը խիղճը կազմելու, լրսաւոր-
ելու և առաջնորդելու համար, ուր
կարենան ընդարձակօրէն որդի կերպով
և պահանջաւ հեղինակութեամբ ա-
ւանդուիլ բարոյականի կանոնք և սկզ-
բունք, առանց որոյ չես կարող որդւոցդ
ներսը կազմել հաստատել բարոյա-
կան և խիղճ:

Սակայն երբ ծնողք իրենք այդ
բարոյական կրթութիւնը ստացած
են, ուղիղ խղճմտանքով օժտեալ են,
յառաջ քան իսկ Եկեղեցոյ բեմէն
ու Գրիստոնէական վարդապետու-
թեան խրատներէն ուսանելու, հայ-
րենի տան ու մայրենի գրկաց մէջ
իսկ մանկուց կարեն ստանալ այն
բարոյական կրթութիւնը և ուղիղ
խղճի կազմութիւնը մեղմ ու անուշ
եղանակաւ, սակայն երկարատեւ և
անջնջելի սպաւորութեամբ: Եւ ա-

տիկայ կրլայ ընտանեկան յար-
կին ներքեւ Գրիստոնեայ ծնողաց
միջոցաւ:

Ո՛հ, ի՞նչ սիրուն է այն տեսարա-
նը՝ յորում երիտասարդ մայր մը, իր
ծուկերուն վրայ բռնած իւր սիրե-
լի մանկիկը, և զայն գրկելով, սի-
րելով կ'աւանդէ անոր բարոյական
այն բարձր դասերը, որք գիւրու-
թեամբ կը տալարտուին, կը դըր-
ուին այն կակաղ ալտին մէջ: — Սի-
րելի զաւակ, կը տեսնես թէ որչափ
կը սիրեմ դքսդ, միշտ սիրուն, բարի
պիտի ըլլաս, այնպէս չէ՞, միշտ պի-
տի սիրես հայրիկդ ու մայրիկդ, այն-
պէս չէ՞, բնաւ անոնց սիրտը չպիտի
ցաւցնես. անոնց սիրտը եթէ ցաւ-
ցնես, սիրելի որդեակ, զԱստուած
վշտացուցած կ'ըլլաս: — Մայրիկ
ի՞նչ պէտք եմ ընեմ Աստուծոյ ու
ծնողաց հաճելի ըլլալու համար:
— Պէտք ես ընել այն ամենը որ Աս-
տուծոյ հաճոյ է, զոր Աստուած կը
հրամայէ: — Մայրիկ, ինչո՞ւ համար
պէտք եմ հնազանդիլ Աստուծոյ,
— Վասն զի Աստուած ամենու Տէրն
ու հայրն է որդեակ, քուկին առա-
ջին հայրդ ալ Աստուած է: — Մայ-
րիկ, Աստուած ի՞նչ պիտի ընէ ինձ:
— Զքեզ կը վարձատրէ եթէ բարի
ըլլաս, իսկ եթէ չար ըլլաս՝ կը պատ-
ժէ: — Մայրիկ, եթէ Աստուծոյ հը-
նազանդեմ գոհ կ'ըլլամ, և զիս չատ
կը սիրե՞ս: — Այո՛, որդեակ, զքեզ
չատ պիտի սիրեմ, վասն զի արժանի
կ'ըլլաս Աստուծոյ օրհնութեանը, որ
քու միջոցաւ գերդաստանին ու
տանը վրայ կը տարածուի:

Այո՛, Գրիստոնեայք, եթէ բարո-
յական դաստիարակութիւնը տրուի
հաստատամիտ հօր մը, սրամիտ, կո-
րովի ու նախատես մօր մը միջոցաւ,
ամենէն օգտակարն ու արդաստունն
այն կ'ըլլայ: Բարոյականի գաղափա-
րը՝ պարտուց զգացումը որոշ ու ան-
ջնջելի տառերով կը գրուի տղայոց
ներսը:

Ինչպէս որ ըմբռնեցիք Գրիստոնե-
այք, խղճմտանաց կազմութեան հա-
մար հարկաւոր է նախ և յառաջ քը-
րիստոնէական ճշմարտութեան ծա-
նօթութիւնը:

Տղուն հոգւոյն մէջ խղճմտանքի
նախնական սկզբունքները կը զե-
տեղուին, մայրենի այն խոժոռ կամ
զուարթ ձայնովը, որով տղուն կ'ը-
սէ: — Գէ՛շ ըրի՛ր, լա՛ւ ըրի՛ր:

Ի սկզբան անդ կերպով մը կա-
րէ ըսուիլ թէ տղուն խղճմտանքը
մայրն է, որ տղուն կը ցուցնէ, կը
նշանակէ լաւն ու դէշն, բարին ու
չարն: Բայց որպէս զի տղան կարե-

նայ օր մը ինքզինքը կառավարել
ինքրին առաջնորդ ըլլալ, պէտք
է ատենին անոր միտքը դարդարել,
լիցնել ուղիղ, առողջ գաղափարնե-
րով, առատօրէն սփռելով տղուն
կամաց առջին լոյս և կորով:

Ամենքդ ալ կը սոսկայիք եթէ
ըսէին ձեզ թէ զաւակնիդ առանց
սկզբանց սրտի մեծնան, տունկերու
նման և կենդանեաց պէս, կամ ծուռ,
սխալ, ախտաւոր, անձնասէր գաղա-
փարաց համաձայն պիտի դաստիա-
րակուին: Այո՛, իրաւամբ պիտի սոս-
կայիք, նախատեսելով տխուր ելքը
ուր պիտի հասնի այդպէս դաստիա-
րակուած տղայ մը:

Սակայն, Գրիստոնեայք, երբ այ-
լոց կը յանձնէք ձեր որդւոց դաս-
տիարակութիւնը, խորհրդ, քննեք,
կշռեք և դիտե՛ք է ինչպիսի ձեռ-
քերու յանձնելիք այդ ծանր գոր-
ծը: Զանազե՞ր էք այնպիսի անձանց
յանձնել ձեր որդւոց դաստիարա-
կութիւնը, որք կարող են և միան-
գամայն պատրաստակամ հեռացնել
ձեր որդւոց սրտէն ախտից արմատ-
ները, ու տնկել անդ և ցանել ա-
ռաքելութեան ու բարւոյն սերմուն-
քը, որք կարող ըլլան և յօժարամիտ
խընել հեռացնել այն մատաղ կոյս
մտքերէն ծուռ ու սխալ գաղափար-
ները ու սփռել անդ ուղիղ գաղա-
փարներ, սկզբունքներ:

Բարէ՛, այն մտային շփոթութեանց
ու բարոյական անկարգութեանց մէջ,
որք ներկայիս ամենէն ուղիղ միտ-
քերն ու կամքերն իսկ կարեն պղծ-
տորել շփոթել, առաքելի ծնողաց-
մէ հեռի գտնուող երիտասարդի մը
ո՛րչափ դիւրին է խաբուիլ ուղիղ
ընթացից ու առաքելի վարուց նը-
կատմամբ: Առանց Գրիստոնեայ ծը-
նողաց բարի դաստիարակութեան և
ուղիղ խղճի օգնութեան, որչափ
դժուար է երիտասարդի մը զինքը
պահպանել յոռի կրկից, ապականեալ
բարուց և ծուռ ու միտք սկզբանց
հեղեղին հանդէպ:

Անկալ որ ունեցած է բարի դաս-
տիարակութիւն, ծնողաց բարի օրի-
նակ, ուղիղ խիղճ և կորովի կամք,
կարէ երբեմն զլորել կրկից բռնու-
թեան հանդէպ, սակայն մորիկն փա-
րատելուն պէս, դըժմամբ խղճին ա-
մօթակոր կ'ողբայ, կը զղջայ իւր անկ-
ման՝ պարտութեան վրայ, աւելի խո-
հեմ ու մտադիւր կ'ըլլայ իւր ընթա-
ցից վրայ զգուշանալով իւր տկարու-
թեանէն:

Կ. Վ. ՔՋՈՒՐԵԱՆ

(Շարունակելի)

Եպսկ. Կարնոյ

Տըպլինտէ Ինկ, գրաւիցասը 10,000 հէ-
 քէն պէրրի վէ պահրի ասաքիւրէ լէսմի

